ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/26, 07.05.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Հույս Մոտոր» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծա ծկագրով բաց մրցույթ

Գնման առարկան՝ Ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարության գնահատող հանձնաժողովին արգելել պայմանագիր կնքել 16, 23, 26, 28-րդ չաաբաժիններով «Արպանիվ» ՍՊԸ-ի հետ և պարտավորեցնել վերանայել 2019թ. ապրիլի 29-ին պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ վերականգնելով «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից շահած չափաբաժինների մասով պայմանագրի կնքման գործընթացը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան , Մելիք- Ադամյան1
Դիմող/բողոք ներկայացրած անձ՝ <<Հույս Մոտոր>> ՍՊԸ
ի դեմս տնօրեն Հ. Հովակիմյանի<<անձնագիր՝ AR0533330
տրված 19.12.2017թ. 009-ի կողմից
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան Զավարյան 12
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Արին-Բերդի 17
Հեռ: 010 471152, 010 474890, 077 044 196
Էլ. փոստ՝ huysmotor@yandex.ru, Tender@LavAvto.am,
info@lavavto.am
Պատվիրատու՝ ՀՀ Պաշտպանության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

ԲՈՂՈՔ

ՀՀ Պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 29-ի թիվ 1.3 որոշման դեմ

ՀՀ Պաշտպանության Նախարարությունը 27/02/2019 հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով բաց մրցույթ, որի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի եվ մարտկոցների ձեռքբերումը:

2019թ ապրիլի 29-ին Պաշտպանության Նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել պայմանագիր կնքելու մասին: Որոշման մեջ նշված է որ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման 43-րդ կետի 4-րդ ենթակետը որոշեց մերժել <<Հույս Մոտոր>> ՍՊԸ-ի հայտը: Վերը նշված որոշումը գտնում եմ անօրինական և անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

<u>Իրավական հիմնավորում՝</u>

*ՀՀ Պաշտպանության Նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է << Հույս Մոտոր>> ՍՊԸ -ի հայտը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի համար 526Ն որոշմամբ հաստատված գնումների ընթացակարգի կազմակերպման կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, համաձայն որի հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը **<u>հանձնաժողովի քարտուղարը</u>**՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն **<u>ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային</u>** փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

*Սահմանված ժամկետում փաստաթղթեր **<u>ընդհանրապես չներկայացվելու դեպքում</u>** հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած*

ՄՏ-ԼՍՏ/ՄՍՀ
3 N ՀՇ-20514-13
07.05.13

մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ գրաղեցրած մասնակցին:

Վերը նշվածից հետևում է, որ <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ը հայտի մերժման հիմք է համարվել սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելը (հիմք՝ գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 29-ի թիվ 1.3 որոշում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի 25.04.2019թ-ի ծանուցում հայտը մերժելու վերաբերյալ/ ծանուցումը կցվում է):

Յանկանում եմ նշել որ <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ն չի հրաժարվել որակավորման փաստաթղթերը ուղարկելու պարտավորությունից, այլ տեղի է ունեցել տեխնիկական խնդիր, որի արդյունքում փաստաթղթերը ուղարկվել են ապրիլի 22-ի փոխարեն ապրիլի 25-ին:

Տեխնիկական խնդիր է հանդիսանում հանձնաժողովի քարտուղարի ուղարկած էլեկտրոնային նամակի Junkmail-երում հայտնվելը, որի հետ կապված մենք ունենք ապացույցներ(կից ներկայացվում է էլ. փոստից արված 1 ին նկարը):

Այն մասին որ <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ն զբաղեցրել է 1-ին տեղը 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով տեղեկացել ենք ՀՀ Ֆինանսների նախարարության http://gnumner.am պաշտոնական կայքից, որտեղ ապրիլի 23-ին մուտք անելով մրցույթի ծածկագիրը տեսել ենք հայտերի բացման նիստի արձանագրությունը, որից հետո ուսումնասիրելով <<Հույս Մուտոր>> ՍՊԸ գնումների համակարգողի Tender@LavAvto.am էլեկտրոնային փոստի <<Junkmail>> բաժինը հայտնաբերել ենք ՊՆ համապատասխան նամակը: Քանի որ ապրիլի 24-ը հանդիսանում է սգո օր և ոչ աշխատանքային է, ապրիլի 25-ին վաղ առավոտից պատրաստել ենք որակավորման փաստաթղթերը և ուղարկել ենք համապատասխան հասցեով:
Տեղեկացնում ենք նաև որ հանձնաժողովի քարտուղարը <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ը հայտը մերժելու վերաբերյալ ծանուցումը էլ. փոստով ուղարկել է 25.04.2019թվականի 18:54,մինչ դեռ <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է 25.04.2019թ. 17:26, այսինքն նախքան հայտը մերժման մասին ծանուցում ստանալը (կից ներկայացվում է էլ. փոստից արված 2-րդ և 3-րդ նկարները):
Նկատի ունենալով, որ <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ուղարկել է նախքան մերժման մասին ծանուցումը ստանալը, հետևապես գնահատման հանձնաժողովի պատճառաբանությունը, որ <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ն ընդհանրապես չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը անհիմն են և հետևապես Պաշտպանության Նախարարության 2019թ ապրիլի 29-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 1.3 որոշումը անօրինական է և անհիմն:
Նաև ուզում եմ հայտնել, որ ֆորմալ պայմանով <<Հույս Մուտոր>> ՍՊ Ընկերությանը ՀՀ Պաշտպանության Նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից որպես վերը նշված չափաբաժիններով հաղթող չճանաչելը բերում է մի շարք անցանկալի հետևանքների, այն է՝ ինչպես ՀՀ պետական բյուջեի ավելացած ծախսերի մասով, այնպես էլ առողջ մրցակցային դաշտի փլուզմամբ և մեր գործարար համբավի վրա սպվերի գցմամբ:
Վերը նշված չափաբաժիններով որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված <<Հույս Մուտոր>> ՍՊ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների մատակարարման գինը

կազմում է 1.769.200 ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ), իսկ երկրորդ տեղ զբաղեցրած ճանաչված կազմակերպության առաջարկած գինը կազմել է 2.627.080 ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ), այսինքն բյուջեի ծախսը վերը նշված չափաբաժիններով ավելանում է 50 տոկոսից ավելի, այն է՝ 857.880 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ):

Հաշվի առնելով որ <<Հույս Մուտոր>>-ն պահպանել է ՀՀ Գնումների մասին օրենքի 50 հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում սահմանված պայմանագիր կնքելու որոշումը բողոքարկելու ժամկետը, այն է պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է ՀՀ Ֆինանսների նախարարության http://gnumner.am կայքում 02.05.2019թ-ին որից սկսած ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ ենթակետի համաձայն <<Հույս Մուտոր>>-ն իրավունք ունի 10 օրացուցային օրվա ընթացում բողոքարկել որոշումը, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի համար 526Ն որոշմամբ հաստատված գնումների ընթացակարգի կազմակերպման կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, որի համաձայն սահմանված ժամկետում փաստաթղթեր ***ընդհանրապես չներկայացվելու դեպքում*** *հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, ինչպես նաև ՀՀ Գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետով*

Խնդրում եմ

բավարարել <<Հույս Մուտոր>> ՍՊ Ընկերության բողոքը, ՀՀ Պաշտպանության Նախարարության գնահատման հանձնաժողովին արգելել պայմանագիր կնքել 16, 23, 26, 28-րդ չափաբաժիններով <<Արպանիկ>> ՍՊԸ -ի հետ և պարտավորեցնել վերանայել 2019թ ապրիլի 29 -ին պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ վերականգնելով <<Հույս Մուտոր>>-ի կողմից շահած չափաբաժինների մասով, այն է 16,23,26,28 չափաբաժինները մատակարարման պայմանագրի կնքման գործընթացը:

Կից ներկայացնում ենք

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը(բողոքարկման վճար)
2. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ին 14.09.2018թ տրված քաղվածքի պատճեն,
3. <<Հույս Մուտոր>> ՍՊԸ-ի տնօրենի անձնագրի պատճեն,
4. գնահատող հանձնաժողովի քարտուղարի 25.04.2019թ-ի ծանուցում հայտը մերժելու վերաբերյալ,
5. Նկար 1, նկար 2, նկար 3:

Դիմող/բողոք ներկայացրած անձ՝ <<Հույս-Մուտոր>> ՍՊԸ տնօրեն՝ Հ. Հովակիմյան

07 ապրիլի 2019թ